ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԶՐԱՐԲԻԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ-Ի
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 31-Ի ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏՈՒՄ
ՏՆՕՐԵՆ՝ ---------- Ն. ՁԱՔԱՐՅԱՆ

ՍՏՈՒԳՎԱԾ Է
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ
ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝
Հ.ՄԱՃԿԱԼՅԱՆ ----------

2022 – 2023 ուսումնական տարի

ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՀՈՍՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

Մասնախմբի ղեկավար՝ Մարիա Ղուկասյան

2022-2023 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԳԼԽԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Որակական նոր մակարդակի վրա բարձրացնել հումանիտար հոսքի առարկաների դասավանդումը դպրոցում, կիրառելով դասավանդման ժամանակակից նորարարական մոտեցումներ:
2. Յուրաքանչյուր դասի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով, ավելի մեծ ուշադրություն դարձնել աշակերտների կիրառական և վերլուծական կարողությունների զարգացմանը՝ ի հակադրություն պարզապես փաստային գիտելիքի մեխանիկական կուտակման և վերարտադրման,լայնորեն օգտագործելով համագործակցային ուսուցման, նոր մեթոդների և մանկավարժական նորագույն տեխնոլոգիաների ընձեռած հնարավորությունները՝ զարգացնել սովորողների հետազոտական հմտությունները:
3.Ապահովել ուսումնական ծրագրերի պահանջների կատարումը՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից մշակված առարկայական չափորոշիչների պահանջներին համապատասխան:
4.Հատուկ ուշադրություն դարձնել ուսուցիչ – աշակերտ հարաբերությունների նոր՝ ինտերակտիվ մեթոդների կիրառմանը, աշակերտակենտրոն դասապրոցեսի և խմբային աշխատանքների կազմակերպմանը:
5. Շարունակել աշխատանքը ուսուցիչների ինքնակրթության, ինքնազարգացման և մանկավարժական-մասնագիտական մակարդակի բարձրացման ուղղությամբ:
6. ՈՒսումնասիրել կրթության վերաբերյալ համացանցում (օրինակ, lib.armedu.am կայքում) տեղադրված համապատասխան նյութերը և գործնականորեն կիրառել մանկավարժական-մասնագիտական նորագույն նվաճումները՝ հատկապես ուսուցիչների փորձի փոխանակման, ստեղծագործական հաշվեվությունների և բաց դասերի միջոցով :
7. Առարկայական մասնագետների կարևորագույն խնդիրներից մեկը համարել՝ ժամանակակից մեթոդներով դասապրոցեսի կազմակերպումը և դասին յուրաքանչյուր աշակերտին իր ընդունակությունների և հնարավորությունների չափով ակտիվ մասնակից դարձնելը, ապահովելով սովորողների՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից հաստատված առարկայական չափորոշիչներով նախատեսված նվազագույն մակարդակի յուրացումը:
8. Ապահովել ավագ դպրոցի սովորողների խոսքի կուլտուրայի և շարադրման կարողությունների զարգացումը հումանիտար՝ ռուսերեն, անգլերեն և գերմաներեն լեզուների դասավանդման ընթացքում:
9. Դպրոցի սովորողներին, առաջին հերթին ավագ դպրոցի, նախապատրաստել դպրոցականների միջազգային և առարկայական օլիմպիադաների բոլոր փուլերին՝ նրանց ստեղծագործական մտածողության, հմտությունների ու կարողությունների զարգացման միջոցով:
10. ՈՒսուցչի աշխատանքը գնահատելիս հաշվի առնել կրթության որակի արդյունավետության բարձրացման ուղղությամբ նրա կողմից կատարած աշխատանքները և տվյալ դասարանի աշակերտների ընդհանուր կարողություններին համապատասխան հնարավոր արդյունքները:

2022-2023ուսումնական տարվա
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

N	Աշխատանքի բովանդակությունը	Ժամկետը	Կատարման պատասխանատու	նշում
1	1.Հումանիտար հոսքի մեթոդմիավորման կազմի հաստատում 2.Մասնախմբի աշխատանքային պլանի քննարկում մեթոդմիավորման քարտուղարի ընտրություն 3□ Մ/մ աշխատանքների պլանավորում և կազմակերպում 4. ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում, բաղադրիչ ժամերի տնօրինման առաջարկության ներկայացում տնօրենին : 5.Առարկայական թեմատիկ պլանավորումների քննարկում 6. Դասագրքերի և ծրագրերի ամիսամսապատասխանություն	2022թ. օգոստոս	Մասնախմբի ղեկավար	
2	1.Բարձրացնել ուսուցչի մեթոդական պատրաստվածությունը: 2.Թեմատիկ և օրվա պլաններ, մատենավարություն 3. Իրականացնել ՀՀ անկախությանը նվիրված տարաբնույթ միջոցառումներ 4. «Մեղու» հայերենի մրցույթի կազմակերպում և անցկացում 5.Ընթացիկ հարցեր	2022թ. սեպտեմբեր	Փոխտնօրեն ուսումնական գծով և մասնախմբի ղեկավար	
3	Հումանիտար հոսքի մեթոդմիավորման ամենամսյա նիստերի կազմակերպում և անցկացում	ՈՒստարվա ընթացքում	Փոխտնօրեն ուսումնական գծով և մասնախմբի ղեկավար	
4	ՈՒսումնական նոր ծրագրերի, դասագրքերի ու մեթոդական ձեռնարկների ուսումնասիրում և քննարկում	ՈՒստարվա ընթացքում	Փոխտնօրեն ուսումնական գծով, մասնախմբի ղեկավար և անդամներ	
5.	Մասնագիտական խորհրդատվություններ և փոխադարձ դասալսումներ:	ՈՒստարվա ընթացքում	մասնախմբի ղեկավար և անդամներ	

6	Իրականացնել տարաբնույթ միջոցառումներ հումանիտար առարկաներից 1.Մ ասնախմբի առարկայական միամսյակի կատարած աշխատանքների ամփոփում 2.Զեկույց <<Սովորողների արժեքային համակարգի ձևավորումը >> թեմայով	սեպտեմբեր -հոկտեմբեր	մասնախմբի ղեկավար և անդամներ մասնախմբի ղեկավար և անդամներ	
7	1.Քննարկել առարկայական օլիմպիադաների ներդպրոցական փուլի կազմակերպման հարցը 2.կազմել և ներկայացնել հաստատման օլիմպիադաների տեքստերը 3. Կազմակերպել միջոցառում Եղիշե Չարեցի 125-ամյակին նվիրված	Նոյեմբեր-դեկտեմբեր	մասնախմբի ղեկավար և անդամներ	
8	1.Ամփոփել և քննարկել կատարած դասալսումների արդյունքները: 2.Ամփոփել առարկայական օլիմպիադաների ներդպրոցական փուլի արդյունքները : Լավագույն աշակերտներին հայտագրել տարածքային փուլին մասնակցելու : 3.Առաջին կիսամյակում առարկայական մասնախմբերի կատարած աշխատանքների ամփոփում, քննարկում	դեկտեմբեր	մասնախմբի ղեկավար և անդամներ	
9	1.Կազմակերպել դպրոցի մասնակցությունը առարկայական օլիմպիադաների տարածքային փուլին 2.ՈՒսուցչի հոգեբանական դիտունակության մասին զեկույց	հունվար	մասնախմբի ղեկավար և անդամներ	
10	1.Տարածքային օլիմպիադաների արդյունքների ամփոփում: 2.Կատարած դասալսումների արդյունքների ամփոփում: 3.Մեթոդական զեկուցում՝ <<օտար լեզվի ուսուցման արդյունավետ մեթոդները >> 4□մասնախմբի առարկայական միամսյակի կատարած աշխատանքների ամփոփում	փետրվար	մասնախմբի ղեկավար և անդամներ	
11	1.Կազմակերպած միջոցառումների և բաց դասերի քննարկում ,գնահատում: 2.Մեթոդական զեկուցում՝ <<ՈՒսուցման արդյունավետ հնարներ >> (զեկուցող՝Մ.	մարտ	մասնախմբի ղեկավար և անդամներ	

	Ղուկասյան): 3.Քննական դասարաններում տնօրինության կողմից տրված գրավոր աշխատանքների արդյունքների ամփոփում:			
12	1.Քննությունների կազմակերպման հարցը: Բանավոր քննությունների քննական տոմսերի քննարկում:Քննական տոմսերը ներկայացնել տնօրինման հաստատմանը:	ապրիլ	մասնախմբի ղեկավար և անդամներ	
13	1.Քննությունների անցկացման և գնահատման կարգի մասին: 2.ուստարվա կատարած աշխատանքների ամփոփում,գնահատում:Հաշվետվություններ: 3.Քննությունների խորհրդատվությունների կազմակերպում:	մայիս	մասնախմբի ղեկավար և անդամներ	
14	1.2022-2023 ուստարում մասնախմբի անդամների աշխատանքի հաշվետվություն 2.Ավարտական և փոխադրական քննությունների արդյունքների ամփոփում:	հունիս	մասնախմբի ղեկավար և անդամներ	

Իրականացնել դասալսումներ հետևյալ քանակով՝

1. Մ/մ նախագահ՝ շաբաթական առվազն 2ժամ

2. Անդամներ՝ շաբաթական առնվազն 1ժամ

Տարվա ընթացքում մեթոդմիավորման նախագահ, անդամներ

Խմբային դասալսումներ.

1. կոնկրետ ուսուցչի մոտ որևէ առարկայի դասը

2. որոշակի նպատակներով դասալսումներ տարվա ընթացքում